

### 5.8. Արտոնագրային գործունեությունը 2002 թվականին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության տեղեկատվության, 2002թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

**Գյուտեր և օգտակար մոդելներ:** 2002թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 208 գյուտի և 14 օգտակար մոդելի հայտ, որոնցից 214-ը՝ ազգային, 8-ը՝ օտարերկրյա հայտատուներից: 1992թ. մինչև 2002թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 1906: 2002թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2001թ. համեմատ ավելացել է 39.9%-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից՝ նվազել է 46.7%-ով և կազմել, համապատասխանաբար՝ 214 և 8: Օտարերկրյա հայտատուներից ստացված 8 հայտերից 2-ը ներկայացվել է Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի շրջանակում: 2002թ. նվազել է ազգային հայտատուների կողմից ներկայացված գյուտերի միջազգային հայտերի քանակը և կազմել 4: 1994-2001թթ. ընթացքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն ուղարկվել է 31 գյուտի հայտ:

186 հայտերով անցկացվել է փորձաքննություն, ընդ որում, 7 հայտերով՝ ըստ էության փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 20 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին: 149 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 10 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին: 11 հայտերով անցկացվել է փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին: 6 հայտով որոշումներ են ընդունվել արտոնագիր տալը մերժելու մասին, 13 հայտով՝ հայտի հետ կանչման մասին:

**Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ:** 2002թ. ազգային ընթացակարգով ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 620 հայտ, որից 388-ը կամ 62.6%-ը՝ ազգային հայտատուներից: 2001թ. համեմատ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 4.7%-ով: Օտարերկրյա իրավաբանական անձանցից ստացված հայտերի քանակը և ազգային ընթացակարգով, և Մադրիդյան համաձայնագրի շրջանակում նվազել է, համապատասխանաբար՝ 41.9%-ով և 14.8%-ով և կազմել 232 և 1433:

613 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում բոլոր հայտերն ընդունվել են քննարկման: Հայտատուների կողմից հետ է կանչվել 10 հայտ, իսկ 27 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Գրանցվել են 648 ապրանքային և սպասարկման նշաններ:

2002թ. դեկտեմբերի 6-ի դրությամբ, Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի շրջանակում ՀՀ նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1433 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 500, իսկ վերջնական մերժման մասին՝ 279 միջազգային գրանցումներով:

2002թ. ստացվել է ապրանքի ծագման տեղանվան 1 հայտ:

2002թ. գործակալություն է ներկայացվել 15 արդյունաբերական նմուշի հայտ, որից 11-ը՝ ազգային հայտատուներից, 4-ը՝ օտարերկրյա:

**Ֆիրմային անվանումներ:** 2002թ. գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3105 հայտ: Գրանցվել է 3037 անվանում, որից 1-ը՝ 2001թ. հայտով, մերժվել է 69-ը: Ֆիրմային անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 17 թույլտվություն:

**Տեղեկատվություն:** 2002թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար: Տեղեկագրերը հրատարակվել են հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 150 գյուտի, 19 օգտակար մոդելի, 10 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 797 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին: Գյուտի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

**Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում:** 2002թ. ընթացքում քննարկվել և գրանցվել է 58 պայմանագիր, որից 56-ը՝ ապրանքային նշանների զիջման, 2-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին: Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև:

**Ֆինանսական ցուցանիշներ:** 2002թ., որպես պետական տուրք, ՀՀ պետական բյուջե նուտքագրվել է 139.0 մլն. դրամ (նախատեսված է եղել 189.7 մլն. դրամ), որի 55.7%-ը (77.4 մլն. դրամ)՝ ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության գծով, 18.0%-ը (25.0 մլն. դրամ)՝ ֆիրմային անվանումների իրավական պահպանության, 6.5%-ը (9.0 մլն. դրամ)՝ գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության գծով, 9.6%-ը (13.3 մլն. դրամ)՝ պետական գրանցամատյանների վարման, 8.8%-ը (12.3 մլն. դրամ)՝ զիջման մասին և լիցենզային պայմանագրերի գրանցման, 1.2%-ը (1.7 մլն. դրամ)՝ գանձատների քննարկման և 0.2%-ը (0.3 մլն. դրամ)՝ այլ գործողությունների գծով: 2001թ. համեմատ գանձված գումարների չափը նվազել է 16.4%-ով: